# «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2017 թվականի _________ «_____»-ի  N ____- Ն

**«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ**

**ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 541-Ն որոշման 1-ին կետին համապատասխան`

Հաստատել «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-53-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումները` համաձայն հավելվածի:

**ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Հավելված

ՀՀ վարչապետի 2017 թվականի

___________-ի N______-Ն որոշման

**«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

| Միջոցառման անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար<br><br>պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը | Իրավական ակտ նախագիծը ներկայացնելու ժամկետը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1. «Շենքերի և շինությունների սեյսմակայունության և տեխնիկական վիճակի պարտադիր գույքագրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2020թ. |
| 2. «Սեյսմիկ ռիսկի նվազեցման մարզային ծրագրերի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2018թ. |
| 3. «Սեյսմիկ շրջանացման կիրառմամբ կազմվող հատուկ համալիր, ինչպես նաև համալիր փորձաքննության ենթակա քաղաքաշինական փաստաթղթերի | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2019թ. |

| | | |
|---|---|---|
| համաձայնեցման կարգը» ՀՀ կառավա-րության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն | | |
| 4. «Հայաստանի Հանրապետությունում ուժեղ երկրաշարժի կամ դրա սպառնալիքի, ինչպես նաև ընդհանուր սեյսմիկ իրավիճակի մասին բնակչության իրազեկման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2017թ. |
| 5. «Պետական ծրագրով նախատեսված սեյսմիկ պաշտպանության ոլորտի աշխատանքների իրականացման կարգերը հաստատելու մասին» ՀՀ ԱԻ նախարարի հրամանի նախագծի ներկայացում ՀՀ ԱԻ նախարարին | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2019թ. |
| 6. «Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս հանրապետու-թյան համար վտանգավոր հեռավորության վրա հնարավոր ուժեղ երկրաշարժի կանխատեսումը հաստատելու մասին» ՀՀ ԱԻ նախարարի հրամանի նախագծի ներ-կայացում ՀՀ ԱԻ նախարարին | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2019թ. |
| 7. «Հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների տարածքների սեյսմիկ ռիսկի փորձագիտական գնահատումները հաստատելու մասին» ՀՀ ԱԻ նախարարի հրամանի նախագծի ներ-կայացում ՀՀ ԱԻ նախարարին | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2020թ. |
| 8. «Սեյսմիկ դիտարկումների ազգային բազմապարամետրային ցանցի ստեղծման և զարգացման, դիտարկումների իրականացման, տեղեկատվության հավաքման և հաղորդման կարգը սահմանելու մասին» ՀՀ ԱԻ նախարարի հրամանի նախագծի ներկայացում ՀՀ ԱԻ նախարարին | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2018թ. |
| 9. Հայաստանի Հանրապետությունում ուժեղ երկրաշարժի սպառնալիքի դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում «Հատուկ սեյսմիկ իրադրություն», իսկ ուժեղ երկրաշարժի դեպքում՝ «Արտակարգ սեյսմիկ իրավիճակ» հայտարարելու, սեյսմիկ պաշտպանության ոլորտի Հայաստանի Հանրապետության պետական մարմնի և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործո-ղությունները հատուկ սեյսմիկ իրադրությունում և արտակարգ սեյսմիկ իրավիճակում սահմանելու մասին» ՀՀ ԱԻ նախարարի հրամանի նախագծի ներ- | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2017թ. |

կայացում ՀՀ ԱԻ նախարարին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ